ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 139-Ա

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ԿԱՐԱՊԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏԱԳԱ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» N 02-Ն հրամանի հավելվածի 86-րդ կետով,

1. Հիմք ընդունելով ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրված «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիրը՝ (Սերիա Ա N 0575, տրված՝ 13.10.2023 թ.) սահմանել, որ Վայոց Ձորի մարզի «Արենի համայնքի Արփի բնակավայրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Կարապետի Հարությունյանը հավաստագրի տրման պահից շարունակում է պաշտոնավարել 5 տարի ժամկետով՝ մինչև 13.10.2028 թվականը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանգամանքով պայմանավորված Անահիտ Կարապետի Հարությունյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անահիտ Հարությունյանին որոշման ընդունման մասին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**